

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլիարիոյ համար

Տարեկան ֆրբ. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրբ. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

Գրութիւնք ետ չեն
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Երբ կ'ուզեմ «Հայերի» ին մեջ աղոտ երեւնալ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

ՊՈԼԿԱՐԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՔ

Ստոյգ աղբիւրներէ հասած տեղեկութիւններ ցոյց կուտան թէ, Պուլիարայ վարժարաններու մէկ մեծ մասին նկատմամբ դժգոհութիւն և բացորոշ կամ խուլ հակառակութիւն կը տիրէ հանրութեան մէջ, և թէ ասոր պատճառը դպրոցական պաշտօնեաներու անձն է, որոնք կրթական կոչումին անպատշաճ ընթացքներով տեղի տուած են զայնթակցութեան:

Թաղ. Խորհուրդներու և Հոգաբարձութիւններու պարտականութիւնն է, մեծագոյն ու նուիրական պարտականութիւնը, իրաց այս ցաւալի կացութեան դարմանը խորհիլ ու որոշել դպրոցական տարեշրջանին լինելէն առաջ, որպէս զի գոնէ առաջիկայ տարեշրջանին մէջ վարժարանները աւելի գոհացուցիչ վիճակ մը ունենան թէ՛ կրթական և թէ՛ միանգամայն իրենց ելևմտական կացութեան տեսակէտով:

Պէտք է հեռացնել այն վարժապետները, որոնք իրենց պաշտօնին պարտականութեանց գիտակցութիւնը չունին, և արժանաւորագոյնները հրաւիրել անոնց տեղ:

Մասնաւորապէս սա հարկաւոր է շեշտել թէ, վարժարանները անպայման դադրելու են մոլի կուսակցական, քառոյսպէս ֆենադասեղի և անօր դարգացման մը կեղծ շպարին տակ ծածկուած մտքի զեկեկներու ձեռքը յանձնուած մնալէ:

Ազգային պաշտօնական մարմիններէն կը խնդրուի ամենալուրջ ուշադրութեամբ կարգալ այս տողերը, որոնք ազգային ամենէն կենսական գործին, դաստիարակութեան հարցին կը վերաբերին, և չի մոռնալ երբէք թէ, մասնաւոր հիմա, մեր այս ճգնաժամին մէջ, պարտաւոր ենք մեր աչքի բխրութուն պէս խնամքով ու գուրգուրանքով պահպանել մեր կրթական հաստատութիւնները, ուր ազգութեան ոգին պիտի սնանի, աճի ու ձեւակերպի մատղաշ մաքերու մէջ:

ԾԱՆՕԹ

Լա Հէէն տեղական թերթերու շրջապատ թղթակցութեան մը նայելով, Պ. Մինաս Չերազ չի կրնալով մուտքի քառթ մը ձեռք ձգել գէթ լրագիրներու թղթակիցներուն պէս, իր շքեղ կառքով ու կուրծքին տեֆտախովովը յաջողեր է շլացնել (խաբել) գրան առջև կեցող պահակ զինուորները, որոնք զինքը գեղականախորհուրդի անդամ կարծելով ներս ձգեր են: Ըսողներ կան որ եթէ իրենք Պ. Չերազի տեղը Բլային՝ այդ եղանակաւ ներս թախանձած ըլլալը գոնէ չէին հրապարակեր, մտածելով որ պատուաբեր չէր այդ տեսակ յայտարարութիւն մը ոչ իրեն և ոչ ալ զինքը զրկողներուն:

Ռուսճուքէն տեղական թերթերու շրջապատին պէս, մեզի ալ հեռագիր մը եկած է, որ տեղւոյն աղգային վարժարանաց փակումը կիմացնէ, իւր պատճառ ցոյց տալով դասատուներուն 7—8 ամիսներէ ի վեր ամսական չառնելը: Բայց մեր ստացած ստոյգ տեղեկութեանց համաձայն, ուսուցիչներուն պահանջը 7—8 ամսական չէ եղեր, որովհետեւ վարժարանը արդէն 8 ամիս է որ բացուած է և այդչափ ժամանակի մէջ վարժապետները ղանաւանալով չապրեցան, ոչ ալ Պանքէն էին որ պատրաստ գրամներին կերած ըլլան: Ասոնց մէջ բացառիկ ծախքեր ունեցողներ ալ գտնուեցան. մէկ երկու վարժուհիներ Պուքրէշ գացին դարմանուելու, ուսուցիչներէ ոմանք վճարեցան ըրին. մէջերին գտնուեցան նաև որ նշանուեցան ու ծախքեր ըրին. այս ամենը ինչով ըրին: Մենք փորձառութեամբ գիտենք որ վարժապետներն ալ խմբագիրներուն պէս չեն կրնար իրենց տրամադրութեան տակ պահեստի գումարներ ունենալ, ինչպէս նաև 7—8 ամիս դիմանալու համար ասկէ անկէ չեն կրնար փոխառու-

թիւներ ընել. ըստ որում, խօսքը մէջերնիս, տուողը դտնելը քիչ մը դժուար է:

Ռուսճուքի ուսուցչական մարմինը կըր նայ Ազգ. սնտուկէն պահանջներուն եցած ըլլալ, բայց զայն գանձելու համար տարեկան քննութենէն 15 օր առաջ գործադուլ ընելը՝ քառապարտելի գործ մ'է: Չար լեզուներ կըսեն թէ, այս 8 ամսուան մէջ տղաքները երես ճերմկեցնելու չափ բան սորված չեն և Պ. դասատուները այս պատճառաւ պզտիկ չի մնալու համար իրենց ամսականները պատրուակ բռնելով՝ վարժարանները դոցած են. մինչդեռ կրնային 8 ամսուան պէս (?) 15 օր ևս սպասել ու յաջող քննութիւններէ յետոյ ճակատաբաց առնելիքնին պահանջել:

Միւս կողմէ ըսողներ ալ կան թէ, Պ. Տնօրէնին ախիկն իրին տակ դադարնիք մը կայ այս եղածներու մասին, որ անշուշտ նոյնպէս երևան պիտի ելնէ:

Այս առթիւ ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրենք մեր ներկայ թուոյն նախաջողութեամբ զրայ:

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Հինգշաբթի օրը Ս. Պատրիարք Հայրը գաւառները զրկեց 1000 ոսկիի գումար մը՝ որուն 800 ոսկին կը ներկայացնեն Որբանոցներու յատկացուած նպաստներ և 100 ոսկիի չափ ալ Միացեալ Ընկերութեան դասատուներու պահանջը. իսկ մնացեալը զանազան տեղեր զրկուելիք նպաստներ՝ կարօտեալներու համար:

— Ազգ. Հիւանդանոցի մէջ, սկսած է հոսիլ անուշ ջուրը՝ զոր Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը, աջակցութեամբ Յարութիւն էֆ. Ասլանեանի, յաջողեցաւ բերել տալ: 400 ոսկւոյ մօտ ծախք եղած է 1500 մէթրօ երկայնութեամբ խողովակներ զետեղելու հա-

մար . այս ծախքը Հիւանդանոցի պիւտճէին վրայ չպիտի ծանրանայ : Զուրը՝ որ Թագսիմի ջուրին տեսակէն է . աւելորդ է ըսել թէ ի՞նչ մեծ օգտակարութիւն պիտի ունենայ Հիւանդանոցի պատասպարեալներուն համար , որոնք պիտի վայելեն անուշ ջուրին ընծայած առաւելութիւնները :

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ

Լա Հէ Յունիս 1

Իրաւաբար ատեննի մը կազմութեան համար եղած առաջարկին՝ Գերմանիոյ առաջին պատուիրակը մերժողական պատասխան տուաւ , ըսելով որ այդ մասին հրահանգ ըստացած չէ իր կառավարութենէն :

ՅԵՏԱԶԳՈՒՄ

Խաղաղութեան Գիսպանախորհուրդին նիստը Յուլիս մէկէն սկսեալ տարի մը պիտի յետաձգուի , որպէս զի տէրութեանց և անոնց պատուիրակներուն միջև բացարձակապէս համաձայնութիւն գոյանայ և այս վերջինները կարենան ճշգրէլ իրենց հետեւելիք ընթացքը :

(Ըստ մեզ , ջուրը ինկած ըսել է . և արդէն ժամանակին ըսած էինք թէ՝ այդ վահաժողովը ԿՈՒՏ ՄԸ ԶԸՆԵՐ) :

Պուրկազի ազգ . վարժարանի դասատուն իր անվայել ընթացքը աւելի ազատ կերպով կը շարունակէ եղեր , Թաղ . Խորհրդոյ հրաժարումէն օգուտ քաղելով :

Թղթակից մը մի առ մի թուելով անոր գործունէութիւնները , ի լրում ամենայնի կաւելցնէ նաև թէ , Թաղ . Խորհրդոյ պաշտօնական կնիքը անոր քով կը գտնուի , որով ուղածին պէս սանձարացակ սկսած է գործել :

Որքան պախարակելի նոյնքան ցաւալի է Պուրկազի ազգայնոց անտարբե-

րութիւնը , որ իրենց մարմնոյն վրայ կը տեսնեն մահացու միքրոպը ու ասոր դարմանը տանելու միջոց մը չեն խորհիր :

Ժողովուրդին մինչև իսկ մութ խաւերուն մէջ մտնելով խաչագողութիւն ընել յանդգնող այդ փորձուած արարածը ի՞նչպէս ազգային հաստատութեան մը մէջ տակաւին կը պահուի :

Քանի որ հիմա Հոգաբարձութիւն և Թաղ . Խորհուրդ չի կայ , Պուրկազի ազգայինք պարտաւոր են յուշաբերիլ , և , փոխանակ իրենց զաւակները այդ մարդուն պատճառաւ օտար վարժարաններ զրկելու , ատոր օձիքէն բռնելով դուրս հանելու են վարժարանէն :

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Յառաջիկայ չորեքշաբթի գիշեր Սաէտինէնի յէի սրահին մէջ ՚ի նպաստ տեղւոյս «Աղջկանց Կրթարանին» նուագահանդէս մը պիտի տրուի , որուն շքեղութեանը համար ամեն ջանք ՚ի գործ դրուած է : Քաջայոյս եմք որ կրթասէր ազգայինք իրենց արգիւնաբեր ներկայութեամբը պիտի պատուեն սոյն հանդէսը , որով քաջալերած պիտի ըլլան վարժարանի խնամակալութիւնը իր շփուարին ձեռնարկին մէջ :

ԹԱՏՐՈՆ

Յառաջիկայ Մայիս 29 շաբաթ գիշեր Սաէտինէնի յէի սրահին մէջ պիտի ներկայացուի Վիգթօր Հիւկոյի «Լուքրէցիա Պորճիա անուն թատերախաղը տաճկերէն լեզուով , տեղացի անձնուէր երիտասարդութեանկ ողմէ , ՚ի նպաստ Տ. Յ. Զաքրեանի որ տակաւին հիւանդ կը տառապի :

Սիրելի է յուսալ թէ յարգոյ հասարակութիւնը իր արգիւնաբեր ներկայութեամբ մեր Ազգ . հին վաստակաւորին ցաւերը պիտի յօժարի մասամբ իւրի մեղմացնել :

ՖՐԱՆՍԻՅԵՕՆ

Բարիկի Գոմէտի ֆրանսէզը այս օրերս կը ներկայացնէ Տիւմա որդիին մէկ թատերախաղը, ֆրանսիացիները: Այդ խաղին յուզիչ պատմութիւնն է հետեւեալը՝ զոր Բարիկցի քրոնիկագիր մը կը պատմէ Բըրքի-Պէօի մէջ և ուրկէ ուղղակի կերպով ներշնչուած է եղեր Տիւմա որդին, իր թատերախաղը գրած պահուն:

* *

1850ին տտենները, Բարիկի արուարձաններէն մէկուն մէջ գոհարավաճառի խանութ մը կար, զոր հիանալի գեղեցկութեամբ մանկամարդ կին մը կը վարէր:

Մինչև 20 մղոն հեռուն, կինը ծանօթ էր «գեղանի գոհարավաճառուհի» տիտղոսով:

Ամէն տեղ կը խօսուէր իր գեղեցկութեան վրայ և ամէն մարդ կը գովէր մանաւանդ անոր աչքերը՝ որոնց փայլը՝ գոհարներըն անգամ չունէին:

Այդ գեղեցկութեան իսկ պոտճառու, խանութին մէջ յաճախորդ չէր պակսեր ամէն օր, ծեր ու երիտասարդ մարդիկ, որոնք աւելի սիրաբանելու համար խանութ կուգային: Պինը ամէն ալ մտիկ կ'ընէր, առանց իր համբաւը արատելու կարող ու է արարքի մը. չէր սաստէր բնաւ իր շուրջը բծնողները, մանաւանդ որ բաւական ալ գնում կ'ընէին անոնք, ամէն անգամ որ խանութ կ'այցելէին:

— Շատ անմեղ բաներ են, կը մտածէր, և յետոյ, առեւտուրը կը բալեցնեն:

Գեղանի գոհարավաճառուհիին ամուսինը, զգայնօտ, խոշոր մարդ մը՝ մինակն էր որ իր կնոջ հրապոյրները կ'արհամարհէր. մտքէն չէր անցընէր բնաւ թէ գանձ մը ունէր իր տրամադրութեանը տակ:

Ար խաբէր ալ զայն, անշնորհ ու գրեթէ տգեղ էակի մը հետ, զոր նոյն իսկ իր բուն կնոջ եղունգը կտրելու արժանի չդատողներ չէին պակսեր:

Եւ որովհետեւ իր յարաբերութիւնները

գաղտնի չէր պահէր, գոհարավաճառուհին շուտ կ'ասկածեցաւ անցած դարձածին վրայ և իրիկուն մը՝ ճաշէն ետքը, երբ իր ամուսինը սովորականին պէս դուրս ելլելու կը պատրաստուէր:

— Ո՛ր կ'երթաս, հարցուց անոր յանկարծ:

— Ինչո՞ւ այդ հարցումը, պատասխանեց մարդը. սովորութեանս համեմատ ինչպէս կ'երթամ:

— Ար ստես. տիկին ք... ի տունը պիտի երթաս:

Ամուսինը, թէեւ յանկարծակիի եկած, շուտ գտաւ ինքզինքը. և համարձակ շեշտով մը՝

— Խե՞ղ ես, ի՞նչ ես, պատասխանեց. այդ տիկին ք... ն հազիւ կը ճանչնամ:

— Մտիկ ըրէ զիս, յարեց կինը, անոր աչքերուն մինչև խորը նայելով, պարկեշտ կին մըն եմ ես ու բնաւ մտքէս չեմ անցուցած դրժել այն խօսքը զոր քեզի տուած եմ Աստուծոյ առջև: Բայց դուն ալ բու կողմէդ ինծի խօսք տուած ես: Այս պարտաւորութիւնը նուիրական է երկուքնուս համար ալ. այն օրը՝ ուր դուն դրժես քու տուած խօսքդ, ես ալ ինքզինքս ապատ պիտի համարիմ՝ պարտաւորութեանէս:

— Այսինքն...

— Այսինքն, եթէ ունեցած կ'ասկածներս համոզումի փոխուն, եթէ կարենամ ապացուցանել թէ սիրուհիի մը հետ կը խաբես զիս, ժամ մը ետքը ես ալ քեզ պիտի խաբեմ սիրահարի մը հետ: Գործը դիւրին պիտի ըլլայ ինչքին: Ընտրել միայն պիտի մընայ ինծի այն սիրուն սրտերու խումբին մէջէն՝ որ ամէն օր, բու բացակայութենէդ օգտուելով, կուգայ մոռցնել լքումը՝ որուն մէջ կը թողուս զիս:

Ապուշ՝ բոլոր իր նմաններուն պէս, էրիկը ցցեց ուսերը, և դէպ ի դուռը ուղղուելով, ըսաւ հեգնօրէն.

— Լաւ ուրեմն, տիկին ք... ի տունը կ'երթամ. և եթէ կ'ուզես ապահով ըլլալ սոր, կրնաս ինծի հետեիլ:

Փողոցին մէջ հազիւ տասը քայլ յառաջացած էր, երբ կինը դուրս ելլելով սկսաւ իրեն հետեիլ:

Քիչ մը ետքը կենը համոզուած էր ալ. ամուսինը շիտակ տիկին ք... Ի տունը մտած էր, թէեւ պարզ շատախօսութեան համար միայն:

Գեղանի գոհարավաճառուհին քանի մը վայրկեանի չափ անշարժ մնաց կեցած տեղը, աչքերը սեւեռած իր հակառակորդուհիին տանը մէկ պատուհանին՝ որուն վարագոյրին վերայ մարգու և կնոջ մը շուքերը նշմարեց: Յետոյ, առանց անգամ մըն ալ հոն նայելու, ետ դառնալ սկսաւ:

Մօտակայ փողոց մը նոր մտած էր, երբ Ս. մարքիզը նշմարեց որ ամենէն աւելի կուգար իր խանութը, և որուն յաճախակի սիրաբանութեանց, հնչուն բրքիշներով միայն պատասխանած էր միշտ:

Եւ, առանց վարանելու, շիտակ անոր քով գնաց, թէն ի վար կախուելով ու հարցնելով.

— Կը սիրէ՞ք զիս:

— Ձեզ կը սիրեմ, պատասխանեց մարքիզը, յանկուրդակի եկած, կը հարցնէք:

— Ան ատեն աւէք զիս, ձերն եմ բռնորովին, բայց շնորհ մը, ինծի ժամանակ մի ձգէք մտածելու:

Յաջորդ օրը Սէն գետէն հանեցին տարաբաղ կնոջ անշնչացած դիակը. խեղճը առանց բահանայի թաղուեցաւ, իբրեւ անձնասպան: Ամէնէն զարմանալի պարագան հոն է որ կոպիտ ամուսինը, բոլոր ուժովը դադարը գրկած, չէր ուզեր բաժնուիլ անկէ, ազազակելով որ զինքն ալ կնոջը հետ թաղեն: Միւս օրը զայն ալ յիմարանոց կ'առաջնորդէին:

* * *

Տիւմա որդիին թատերագութիւնը նուազ եղերական վախճան մը ունի: Բայց այս պատմութիւնը, բոլորովին ճշմարիտ, կ'ապացուցանէ որ եթէ ճշմարիտը յաճախ կրնայ ճշմարտանման չըլլալ, անճշմարտանմանն ալ շատ անգամ կրնայ ճշմարիտ ըլլալ:

Թ.

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ԹԱԳՏԻՄ ՕԼՄԱԳ

(ՆԵՐԿԱՅԱՆԱԼ)

Կէչէն հափթա Ռուսնուք թռեմի իլէ Կէպէճէ սթասիօնունտան շէհրիմիլէ նագլ օլունան պէշ օն սանտրգ հաւկիրլէրին իշինտէն պիր թանէսի գազաէն պուրատա գալմըշ օլուպ, մէրգում շուսուրէթլէ քէնտիսինի շէհրիմիլ միւսիւ վէ մատմաղէլլէրէ բուէզանթէ իտէյօր:


«Մամզէլ է մէօսիէօ,

« Հագիր դուլունուզ, միւսիւ Հաւկիր Դեղնուցեան, պու կիւն քէնտիմի սիզլէրէ թագտիմ իթմէքլէ քէսպի ֆալըր էյլէրիմ: Պէնտէնիլ 30,000 ֆըրանքլըզ պիր սէրվէթի հաւա սահիպի օլուպ, հաւաշի թիճարէթլէ մէշղուլ պուլունմագտայըմ, մէսէլա, Ամերիգատան պալեալար ըլա... սու կէթիրտիրիլմ, եունանիսթանտան եաղ թուլումլարըլա տօլու... հաւա կէթիրտիրիլմ, եագընտա միւճէվհէրճիլիք իթմէք էֆքեարընտա տա պուլունտուղումտան թրանսվալտան պիր թագըմ... չագմագ թաշլարը կէթիրտիրէճէիմ: Տիւնեանըն էն մէշհուր շէհրիլէրինի վօալեաթ էթմիշիմ տիր... բույաւտա, էվրօբա տէվլէթլէրինին քեաֆֆէի էլիլէրիլլէ կէօրիւշմիւշիմ տիր... խէյալիմտէ: Պէնտէնիլ Պիլարտօյու Պուքըշտէ գօնսիւլլէր իլէ օյնամըշըմ, վէ պեգիկի տախի միւթատըմ իւզրէ թիւյսիւզլէր, եանի մատմուաղէլլէր իլէ օյնամալըլըմ, պեգլեմէֆ իշիւն:

Հէրքէստէ պիր արզու պուլունտուղը կիպի, պէնիմ արզում տախի մատմուաղէլլէր իլէ իւլֆէթ բէյտահ իթմէք, օնլարըլա... գէվպէքլէնմէք, վէ պտղէն պիրտտէրլէրի եախօտ ագրա-

պալարը թարափընտան... պաւսօն գօմ-
բօթօտու եէմէք տիր: Իշպու արզումա
իւք տէֆա Պուքրէշտէ նաիլ օլապիւմի-
շիւմ տիր: վէ պուռուն իշիւն տաիմա
շիւքը իտէրիմ, նասըլ քի պըյըգլարըմ
տաիւի շիւքրանիյէթ նիշանէսի օլարապ,
գուպպէի ասիւմանա տօղրու արզուհալ
վէրիւր կիպի եօգարը տիքիւմիշ պիր
հալտէ պուլսնմագտա տըր:

Միւլագգաթ իգամէթ կեհաշըմ Մու-
սալլա ճատտէսինտէ սիւտծիւ-իշկէմպէ-
ճի, եօղուքտծու-աշճը կօքօթին նիգօլ-
չօնըն պիլա նօմէրօ տիւքեանը օլուպ,
պէնի արաեան հէր կիւն սաաթ 12տէն
1է գատար մէզքիւր տիւքեանըն պիր
մասասը էօնիւնտէ պուլապիլիւր ագշամ
իւթիւ տաիւի, քրքի-քաղիտէ գրէմ սի-
մօնլա թրաշ բէյուտա օլտուգտան սօն-
րա միւթատըմ իւղրէ կիւնտէ պէշ տէ-
ֆա տէյիշտիրմէքտէ օլտուղում շաբգա-
լարտան թամ սիյիւսիւրի պաշըմա գօ-
յուպ, հաճի Բանագօ ճատտէսինտէ ա-
շաղը եօգարը կիկէր եիւրիւյիւշիմլէ սը-
շրամագտա, վէ շախըմ իշիւն թէէլիֆ
իթմիշ օլտուղում աթիտէքի գանթօյու
պուրնումուն ալթընտան թէրէննիւմ
իթմէքտէյիմ:



Հաւկիթ գուլունուզ քէնտիմ,
Սիզէ թագտիմ իտէրիմ,
Աշըթաշըթ հիւնէրիմ,
Հաֆիֆլիյի սէվէրիմ:

Բօմանիայը տօլաշտըմ,
Հաւկիթլէրէ գարըշտըմ,
Սամանլարա պիւրիւլիւպ,
Պու շէհրէ վասըլ օլտում:

Նազարաթ

Պօյում պօսում եէրինտէ,
Գըյաֆէթիմ նատիտէ,
Պանա գէվգէք տէյօրլար,
Էօյլէ շէյ վա՞ր մը պէնտէ:
Սանաթըմ կիւլ տամլասը
Պաթմագտան եօգ գօրգուսու,
Նէ՞ տիր տէյի սօրուլսա՝
Պօշկէզէնին պաշ գալֆասը:
Պանա էհէմմիյէթ եօգ,
Անճագ մայթապ իտէն չօգ,
Չարշը-բաղար, հէր եէրտէ
կիւլէնին հիսապը եօգ:

Նազարաթ

Կանթ վէ պաստօն էլիմտէ
Կըստօմ էտամ գըվամտէ,
Պանա զիւպպէ տէյօրլար,
Էօյլէ շէյ վա՞ր մը պէնտէ:

* *

Խիւլասաի քէլամ, մատմուազէլին
պիրինէ եաղմըլ օլտուղում եիւրէքլէր
բարալայըճը պիր մէքթուպումը իլէ-
րուտէ էնզարը տըղգաթընըզա հէվալէ
իտէճէիմի շիմոիտէն վատ իտէրէք,
Գալըրըմ տայիմիւլէվգաթ հագիր
գուլունուզ ՀԱԻԿԻԹ ԴԵՂՆՈՒՑԵԱՆ

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱ՝

(Տեղեկագիր Բոժոժիկի)

ՀՈՒՄԼԱ

Հուլիս հասայ ու խանքաւը էսկի հիւ-
քիւմէթ մէյտանը կոշուած տեղը կանգնեցի:
Լսածիս նայելով, մէկ քանի երիտասարդներ
թէեւ փափագիր են զիս կայարանէն գիւմառ-
րել ու քայքօն մը նստեցուցած հայոց թա-
ղը առաջնորդել, բայց այն միջոցին քսակին
... պարապ է եղեր, նման այն խորհրդա-
ւոր վաղրանւպիղրանեան քսակին, որ հոս,
հնուց մնացած աւանդական սովորութեան մը
համեմատ, աւսական ուզող աղգային պաշ-
տօնեաներուն ցոյց կը տրուի եղեր, «իշթէ
բէսէնին իշէրիսի, իշթէ տըշարըսը ր ըսելով
Ինչ որ է, հապիւ բիշ մը յոգնութիւն առած

ու սրճեփ Պ. Վահանին կողմէ անպատէն հը-
րամցուած սուրճը խմելու վրայ էի, ահա ի-
րիկուան արձակուրդի պատճառաւ քովի դա-
ռիվարէն իջնող խումբ մը դպրոցական տղոց
վրայէն եկած. . . Բիւրյաւստըին հոտը քը-
թիս ուշադրութիւնը հրաւիրեց. ուստի ա-
նոնց մօտենալով հարցուցի.

— Ուսկից կուգար, պարոններ.

— Վարժարանէն.

— Վարժարանէն մի. . . բայց դուք
քիւլպաստը կը հօտիք կոր:

— Ճշարիտ է, Պ. Բոժոժիկ. մեր միւ-
սիւ տնօրէնը ընթերցասիրահին տակի յարա-
կը եփել կուտայ իր ուտելիք կերակուրնե-
րը, որոնց մօտը ու ճենճին հոտը այսպէս
վրանիս կը տարածուին: Երէկ՝ խաքաւա
կը հօտէինք, առջի օրը ձուածեղ, այսօր Բիւ-
րյաւստը ու թերեւս վաղն ալ տապկած ձուկ
պիտի հօտինք:

— Պարոն տնօրէննիդ ո՞ւր է.

— Ահա ետեւնուս վազելով կուգայ կոր:

— Օ՛հ, հրամայեք, Տիար Ստեփանէ,
երկրիս սովորութեանը համեմատ. խօսեցիք
անթիւ պէտք է դուք ալ կշռուիք:

— Բայց ներեցեք, խորհրդէջը անցաւ.

— Ընդհանուակը տիար տնօրէն. մին-
չէ հսկանքներ 20 օրացոյցի երեսներուն վե-
րի ծալը խորհրդէջը նշանակուած է. հե-
տեաւար նոյն եղանակին մէջ կը գտնուինք:

— Սակայն ես ստիպողական՝ գործեր
ունիմ, և արդէն ուշ ալ մնացի, Ամիրալի
հրամանատարը եկած է որ այս միջոցիս ին-
ծի կըսպասէ հօթէլ տեղ էնսթիւթուիսի մէջ.

— Ո՞ւր կը սպասէ ըսիր.

— Հօթէլ տեղ էնսթիւթուիսը.

— Այդ անունով հոս հօթէլ կա՞յ մի ես.

— Այո՛, կայ, զոր մինակ մինք գիտենք.

— Շատ աղէկ, ուրեմն եկէք կշռուե.

ցեք ու դարձեալ ճամբանիդ շարունակեցէք:

— Չըլլար, ուշ կը մնամ, կարեւոր խն-
դիրներ կան կարգադրուելիք, ի մէջ այլոց
100 ֆրանքի խնդիրը այս գիշեր պիտի կար-
գադրուի լմնայ, (երթայտ վրայ)

— Հո՛ս եկուր, ո՞ւր կ'իրթաս. . . եղ-
բայր, երկու վայրկեանի գործ է ասիկայ,
նստէ՛սա խանթարին մէջ.

— Բայց ես այս մարմնովս կը վախնամ
ատոր մէջը նստելու.

— Մի՛ վախնար, մի՛ վախնար, թէեւ
գեր ես, բայց այնչափ ծանրը չես կշռեր,

խօսքը մէջերնիս, մէջիքօֆ կը սեպուիս:

— Աղէկ, բայց կը վախնամ կըսեմ.

— Ես ալ քեզի մի՛ վախնար կըսեմ.

ասիկա վարդանանցի առթիւ շինել տուած
խոխովի՞ թատերաբեմիդ չի նմանիր, որ
կործանի ու օրիորդի մը ոտքին կաղ մնալուն
պէս քու ալ մէկ կողմդ վտանգուի:

— Կաղաչեմ, լռեցէք, մարդ չիմանայ,
և արդէն մենք այդ բանը հերքեցինք.

— Հերքեցիք մի՛. ընդհանուակը, հետ-
քը ձգեցիք. . .

— Լռեցէ՛ք, լռեցէ՛ք.

— Ու մինչև իսկ օրիորդի մըն ալ վա-
խէն մեռ. . .

— Հոգիդ սիրես. ալ բաւական է.

ուզածդ ի՞նչ է, ըսէ՛:

— Նստէ՛ որ կշռուիս.

— Ահա նստեցայ, քաշէ՛ նայիմ, աս
ինչ փորձանք մարդ ես եղեր.

— Կը քաշեմ կոր. հարկը եօթանասուն:

— Ի՞նչ կըսես, հապա քիչ մը առաջը-
սիր, որ, թէեւ գեր, բայց այնչափ ծանր չեմ:

— Մ'աճապարեր, հաշիւը ճիշդ է. աս
շալակդ առած 120 քիւօ կեղծաւորութեան
տառան զեղչելուդ պէս՝ թամ քիւօդ կը գըտ-
նաս:

— Ուրեմն ծառայ եմ.

— Տաւնոցը չի մոռնաս: Ամիրալին եւ
իւրայնոց ալ ինձմէ շատ շատ բարեւ ըրէ՛:
Ի՛՜ ճանըմ, կէլ գանթարա՛. կէլ գանթարա՛.

— Նկողից ծնունդներ, գարշելի արա-
րածներ. . .

— Հէ՛, փողոցին մէջ ադ պոռացողը ո՞վ է.

— Պիղիմ տէրպապա տըր, քի՛մ պի-
լիր, կէնէ քիմէ՞ հըրսլանըլ.

— 2օ՛գ մը հըրսլանըլ.

— Նէ՞ սէյլէյօրսըն, օնուն հըրսը՝ ա-
մէրիգան պալեստընտան տահա աղըր տըր.
օնուտա չէքէճէ՛ք միսին:

— Չէքէճէ՛ք միս, պիղիմ գանթար
պալեսա աղըրլըղը չէքէ՛ք մի ես.

— Տօղրու տըր. գա՛րտալ, պիր տէյիր-
մէտեն պիր տէր. խօրէնտէն գուրթուլամա-
տըդ կիթտի: Թէ կէլիյօր.

— Օրհնեցէք Տ. Խորէն Հայր. հրամ-
անեցէք.

— Աստուած օրհն. . . հէ՛. վա՛յ գար-
շելի արարած. . . Բոժոժիկ, դո՛ւն էս.

— Դու ասես. հրամմէ՛ նայինք:

(Շարունակելի)

Նոր Հրատարակութիւն

Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

ՄԵՂՔ և ԱՊԱՀԱՆԻ

Պոլսական կեանքէ քաղաւած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Գ. Փափազեան

Գին 60 սանթիմ: Դիմել խմբագրութեան:

ԸՆԴԱՐՁԱԿ



ՈՐ ԲՆԱՐ ՀԱՅԱԿԱՆ

Կամ Հաւաքածոյ

Հին եւ նոր Ազգ. երգերու

208 էջերէ բաղկացած սոյն երգարանը կը ծախուի Վառնա Ա. Զարպհանէլեանի գրատունը: Գինն է 2 ֆր. թղթատուրի ծախքը գըրատան վրայ ջրլալով: Դրամի փոխարէն կ'ընդունուի Պուլկարական Գաղ Գերմ. Անգղ. և Թրքական չի գործածուած նամակադրոշմներ:

10

Մ. 2.

ԹՈԹՈՎՍՈՒՆՔ



Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վառնա:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печантица "Взаимность," — Варна.

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Երաշխատրեալ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	Թիւեր
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4.5	2000	"
" Սեպտ.	3.4	"	"
" "	23.24	"	"
" Հոկտ.	13.3նոյ	16,000	"

Ամբողջ	Կէս	Քառորդ	Մէկ ութերդ.
Ա. Ամբողջ	5 ֆ.	2, 50 ֆ.	1, 25 ֆ.
Ա. Բ.	16	4	2
Գ.	20	5	2, 50
Դ.	28	7	3, 50
Ե.	24	6	3
Զ.	17, 20	4, 80	2, 15
	115, 20	28, 80	14, 40

Գնեկու և մանրա: Բան տեղեկութեանց համար պէտք է գինի Սեպտեմբր 1899 ՍԱՐԳԻՍ ԳԱՐԻԷԼԵԱՆ, Վիսկ գրատու գործակալ սոյն վիճակահանութեան, Վառնա, Մոսկովա:

Շրջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Մ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէն ալ վճարել: